



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5 ԳԵԿՏԵՄԲԵՐԻ, 2016 թ.  
№ 14 (999)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
երկշաբաթաբերթ • հրատարակման 51 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## «ԿՅԱՆՔԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

Գաղտնիք չէ, որ ժամանակը չի խնայում անգամ տաղանդավոր անհատներին: Այդպես էլ նա չխնայեց Հայաստանի և միջազգային փիլիսոփայական հանրության մեջ հայտնի մի անհատականության ակադեմիկոս Գեորգ Աբելի ԲՐՈՒՏՅԱՆԻՆ:

Մանկավարժական համալսարանում կազմակերպված «Կյանքը և փիլիսոփայությունը» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողով-

վը՝ նվիրված Գեորգ Աբելի Բրուտյանի 90-ամյակին, հարգանքի յուրահատուկ տուրք էր գիտնականի ապրած կյանքի, գործունեության ու գիտական ձանաչման հանդեպ: Միջազգային գիտաժողովի կազմակերպիչները, հյուրերն ու բոլոր մասնակիցները փորձեցին վերաբժանել ու նորովի բացահայտել բրուտյանական փիլիսոփայության սկզբունքներն ու հմայքը: > 2



### ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է. սա բյուրեղացած ճշմարտություն է, որին չհավատալու հիմքեր չունենք: Գաղտնիք չէ նաև, որ 21-րդ դարը լի է մարտահրավերներով. ընտանիքում ոչ հունամիստական վերաբերմունք երեխաների նկատմամբ, պառճառներ, որոնց մեջ պետք է խորամուխ լինել, դպրոցական կառավարման ձևական խորհուրդներ, երբ աշխատանքը մնում է տնօրինության ուսերին, ծնողական համայնքի օտարում դպրոցից և այլն... Ի վերջո պետք է հասկանալ. «Երեխան պետք է անպայման մասնակցի իր կյանքին վերաբերող բոլոր հարցերին»...

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գիտաժողովների ձևաչափով մանկավարժության ժամանակակից խնդիրներին վերաբերող քննարկումները պարբերական բնույթ են կրում:

Նոյեմբերի 30-ին քննարկման թեման մանկության հիմնախնդիրն էր ժամանակակից հայ ընտանիքում 21-րդ դարի մարտահրավերների կանխման և հաղթահարման ուղիների համատեքստում: Գիտաժողովը համալսարանի հարկիները համախմբել էր կրթության ոլորտի ներկայացուցիչներին՝ Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունից, դասախոսների, դպրոցների տնօրենների, ուսուցիչների, ծնողկոմիտեի նախագահների, կրթության փորձագետների և այլ շահագրգիռ անձանց:

Մանկավարժական համալսարանի և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության նախաձեռնությամբ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները. կախման և > 4

ՀՊՄԸ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը վերջերս դարձավ Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Առիթից օգտվելով, որոշեցինք նրա հետ զրուցել հնագիտության և համալսարանում դասավանդվող այդ առարկայի խնդիրների շուրջ:

### «ԸՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՎՐՈՒՍՏ ԵՐԿՐԻ ՄԵՆԱՇՆՈՐԸ Է», -

ասում է հնագետ, ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը

- Պարոն Փիլիպոսյան, շնորհավորում են Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ դառնալու առթիվ: Ի՞նչ է դա Ձեզ համար:

- Դե, ինչ-որ տեղ հաճելի է, որ նաև քո գործընկերները զնահատում են աշխատանքը: Դա շատ պարտավորեցնող է: Բնականաբար աշխատանքներն այնպիսին են, որ համագործակցությունը շատ է ռուսների, և ոչ միայն նրանց հետ, իտալացի, լեհ և ուրիշ գործընկերների հետ: Համագործակցությունը հատկապես սերտ է լեհերի հետ: Հայ-լեհական համատեղ միջազգային հնագիտական արշավախումբ ենք ստեղծել, որն աշխատում է Մեծամորում: Արդեն չորրորդ տարին է, ինչ նրանց հետ պեղումներ ենք կատարում: Հավելեմ, որ արդեն երկու ցուցահանդես ենք կազմակերպել Լեհաստանում՝ նվիրված մեր պեղումներին, Հայաստանի հնագիտությանը: Մեծամորի քաղաքային թաղամասում ու դամբարանադաշտում այդ տարիներին կատարած պեղումները հնագիտական շատ հետաքրքիր արժեքներ են տվել: > 5

### «Յուրաքանչյուր պարզև ինձ համար թանկ է»

«Յուրաքանչյուր պարզև ինձ համար թանկ է և միաժամանակ պարտավորեցնող, այս մեղալի իր ուրույն տեղը կգտնի իմ մյուս պարզևների կողքին», - ասաց հայ հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ, աշխարհի կրկնակի չեմպիոն, Եվրոպայի եռակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր Արթուր Ալեքսանյանը Մանկավարժական համալսարանում ուսանողների հետ հանդիպմանը, երբ բազմաթիվ պարզևներին ավելացավ ևս մեկը՝ «Մանկավարժական համալսարան» մեղալի:



Բուհի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպմանը պրոռեկտոր Արմեն Թամազյանը Արթուր Ալեքսանյանին ոսկե մեդալով պարգևատրելուց հետո ուրախությամբ նկատեց չեմպիոնը սեր է վայելում հասարակության բոլոր շերտերում, իսկ դրա վառ ապացույցը մարդաշատ այս դահլիճն է: Վերհիշելով մարզարվեստում պատմական փաստերը՝ պրոռեկտորը նշեց, որ Արթուր Ալեքսանյանի հաղթանակը հայ ժողովրդի համար շատ սպասված էր. «Արթուրի հաղթանակը նշանակալի է բոլորիս համար, շատ երկար էինք սպասել այդ հաղթանակին, 20 տարվա ընդմիջումից հետո նա հայ ազգին պարզևեց այդ բերկրանքը»: > 8



տիկուտի (ԱՄՆ, Նյու Յեյքս) պետական համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, փիլիսոփայության պրոֆեսոր Արմեն Մարտուպեանը, (Բացակայության ներկայությունը. Տեղի հայկական լուսանկարչությունը Օսմանյան Անատոլիայում), Ինստիտուտի (Ավստրիա) համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, «Միջազգային առաջընթաց» կազմակերպության նախագահ, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կյոխլերը (Նորմատիվ հակասությունները միջազգային իրավունքում. հետևություններ իրավունքի փիլիսոփայության համար): Միջազգային գիտաժողովի ընթացքում հետաքրքիր դասախոսություններով հանդես եկան նաև

արժևորեցին Գ. Բրուտյանի և Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի դերն ու նշանակությունը փիլիսոփայության ոլորտի համաշխարհային նշանակության համատեքստում:

«Ամբիոնի ստեղծման օրվանից կառույցում աշխատել են բացառապես նրա ամենատարբեր սերունդների աշակերտները, ովքեր շարունակում են գիտակազմակերպչական և ուսումնանեթոդական այն աշխատանքները, որոնց հիմքը դրել էր ակադեմիկոսը: Ամբիոնն իր համար այսօր էլ որպես գիտական ուղղություններ ներառել է Բրուտյանի հայեցակարգերում ընդգրկված խնդիրները», -ասաց ՀՀՄՍՖ Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գի-

# «ԿՅԱՆՔԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

➤ 1 «Հոգեբանությունը հաստատել է, որ տաղանդը բազմակողմանի է: ...Ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանն աչքի է ընկնում ոչ միայն իր տաղանդի բազմակողմանիությամբ, այլ նաև մտահղացումների խորությամբ և նվաճումների անհասանելիությամբ: Իսկ վերջին բնութագրերը բնորոշ են ոչ թե կարճատև փայլատակող տաղանդներին, այլ ճշմարիտ հանճարներին: Դա նշանակում է, որ ի դեմս ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի, մենք գործ ունենք այն եզակի դեպքերի հետ, երբ փայլուն ու բազմակողմանի տաղանդը միաձուլված է խորը և ճշմարիտ հանճարի հետ», -գրել է ակադեմիկոս Գ. Բրուտյանի ուսանող և գործընկեր պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը իր «Ակնհայտն՝ անհավատալի» հոդվածում՝ նվիրված իր Ուսուցչի 85-ամյակի հոբելյանին:

Գաղտնիք չէ, որ ժամանակը չի խնայում անգամ տաղանդավոր, հանճարեղ ու ու եզակի անհատներին: Այդպես էլ նա չխնայեց հայրենի և միջազգային փիլիսոփայական հանրության մեջ հայտնի մի անհատականության՝ ակադեմիկոս **Գեորգ Աբելի Բրուտյանին**:

Մանկավարժական համալսարանում կազմակերպված «Կյանքը և փիլիսոփայությունը» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողովը՝ նվիրված Գեորգ Աբելի Բրուտյանի 90-ամյակին, հարգանքի յուրահատուկ տուրք էր գիտնականի ապրած կյանքի, գործունեության ու գիտական ճանաչման հանդեպ: Միջազգային գիտաժողովի կազմակերպիչները, հյուրերն ու բոլոր մասնակիցները փորձեցին վերաթևոթել ու նորովի բացահայտել բրուտյանական փիլիսոփայության սկզբունքներն ու հմայքը: Երկու օր Մանկավարժական համալսարանի կամարների ներքո գիտաժողովի մասնակիցները փիլիսոփայության խորքերում ներդաշնակվում էին ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անհավատալիորեն մեծ և ընդգրկուն գործին ու ժառանգությանը, իսկ նոյեմբերի 21-ից 24-ը համալսարանում փիլիսոփայության խնդիրներին վերաբերող բաց դասախոսությունների օրեր էին:

Գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀՄՍՖ-ն, Միջազգային փիլիսոփայության ակադեմիան և Հայոց փիլիսոփայական ակադեմիան, հարուստ ու ընդգրկուն էր միջոցառումների տեսանկյունից, մասնակիցների աշխարհագրությամբ, բաց դասախոսություններով և զեկուցումների բովանդակությամբ:



յամբ: Միջազգային գիտաժողովին մասնակցում էին ինչպես Հայաստանից, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Ավստրիայից, Հունաստանից, Ռումինիայից, Հունգարիայից ժամանած փիլիսոփայության ոլորտի շուրջ 70 գիտնականներ ու հետազոտողներ: Գիտաժողովի ընթացքում, պլենար նիստում և 5 բաժանմունքներում ներկայացվեց 53 զեկուցում, որտեղ քննարկվեցին և վերլուծվեցին իմացության տեսության, հաղորդակցման, փաստարկման և հետադարձության, սոցիալական փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հասարակական և քաղաքական փոխակերպումների, բարոյագիտության, բիոէթիկայի փիլիսոփայության պատմության, կրթության փիլիսոփայության և մեթոդաբանության, մանկավարժության և հոգեբանության բազմաթիվ հիմնախնդիրներ:

Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցավ պլենար նիստ, այնուհետև բաց դասախոսություններով հանդես եկան Բուխարեստի պոլիտեխնիկական համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, Ռումինիայի ակադեմիայի պատմության, գիտության փիլիսոփայության և տեխնոլոգիայի կոմիտեի Տրամաբանության, մեթոդաբանության և գիտության փիլիսոփայության բաժանմունքի փոխնախագահ Աննա Բազակը (Նախագուշակական սկզբունքը. Դրա տրամաբանությունն ու կառավարումը), Իոաննիսյայի (Հունաստան) համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի պրոֆեսոր, Միջազգային փիլիսոփայական ակադեմիայի անդամ Ջորջիա Ապոստոլոպոլուն (Անտիկ հունական Լոգոսից դեպի եվրոպական ռացիոնալություն), Հարավային Կոնստան-

միջազգային ճանաչում ունեցող փիլիսոփաներ. Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի վարիչ և միջազգային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բալաժ Մեզեյը (Աստվածային հայտնության հասկացության մեթոդաբանական կարևորությունը պատմական տեսանկյունից), Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի հասարակագիտական ֆակուլտետների փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Ալեքսեևը, Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, ակադեմիկոս Քաջիկ Օհանյանը, ով խոսեց բուհական համակարգում տեղի ունեցող փոխակերպումների և կառավարման արդի հիմնախնդիրների մասին, և ուրիշներ:

ՀՀՄՍՖ Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնը անվանակոչվեց ակադեմիկոս Գ. Բրուտյանի անունով, և ամբիոնի նախասրահում ներկայացրել են հարավորություն ունեցան դիտելու ակադեմիկոսի գիտական վաստակի գնահատականը ներկայացնող պարզևների ցուցադրությամբ:

Գիտնականի կյանքի ու գործի ժառանգականության, անհատականության, բրուտյանական կերպարի առանձնահատկությունների մասին խոսեցին ՀՀՄՍՖ Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը և Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կյոխլերը: Նրանք



տությունների դոկտոր, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյանը:

«Ինձ հատկապես զարմացրել է ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ոչ միայն նվիրվածությունը ընդհանուր գաղափարին, փիլիսոփայությանը, այլ նաև նրա հետամուտ լինելը փիլիսոփայական գաղափարներին և լավագույն արժեքների ներդրմանը, որի արդյունքում կարող ենք փաստել, որ նրա ջանքերի շնորհիվ է, որ փիլիսոփայությունը համաշխարհային մակարդակով կարծես վերափոխվեց փիլիսոփայության դերը ողջ աշխարհում, և այդ դերը իր նպաստը բերեց նույնիսկ քաղաքական ոլորտում տեղի ունեցած փիլիսոփայական ընթացումների հարցում», -ասաց Հանս Կյոխլերը:

Գիտաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 22-ին համալսարանի մեծ դահլիճում:

Ականավոր գիտնականի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովը բացեց ՀՀՄՍՖ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, ով փաստեց, որ Գ. Բրուտյանի գործունեության վերջին տարիները սերտորեն կապված էին Մանկավարժական համալսարանի հետ և ունեցնորիվ համալսարանը շատ որոշակի նվաճումներ արձանագրեց գիտական հետազոտությունների, մանկավարժական գործունեության մեջ:

«Գեորգ Բրուտյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության ինստիտուտը, իսկ 2012 թվականին աշխարհի 13 երկրների գիտնականների մասնակցությամբ մեծ միջազգային գիտաժողով տեղի ունեցավ Մանկավարժականում, որը մեծ արձագանք ունեցավ աշ-

# «ԿՅԱՆՔԸ ԵՎ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ»



➤ 2 խարհի գիտական հանրության շրջանում»:

Ռեկտորն անդրադարձավ ակադեմիկոսի նախածեռնությանը լույս տեսնող «Իմաստություն» ամսագրին, որն այսօր իր տեղն ունի հեղինակավոր միջազգային շտեմարաններում: Այն ոչ միայն հպարտություն է նվաճում է մեր համալսարանի, այլև մեր երկրի համար: Հունամիտար ասպարեզում Հայաստանում կա ընդամենը 2 նման ամսագիր, որից մեկը այդ ամսագիրն է:

Համալսարանում գործող ատենախոսությունների պաշտպանության խորհուրդը ևս կապված է Բուստյանի անվան հետ:

Ռեկտորն ընդգծեց, որ համալսարանի Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնը, որ այսուհետև կրելու է մեծ գիտնականի անունը, հարգանքի մերօրյա տուրքն է փիլիսոփայության մեջ մեծ հետազոտ ունեցող ակադեմիկոսի կյանքի, գործի ու հիշատակի առջև:

ՀՀ ԿԳ նախարար Լևոն Սկրտչյանն ասաց. «Հասարակությունները զարգանում են, պետությունները գոյատևում են և իրենց շարունակականությունը պահպանում են կոնկրետ մարդկանց միջով, կապ չունի, թե որ բնագավառում են նրանք գործում: Մարդիկ, որոնք իրենց վրա վերցնում են առաջատարի դերը և կարողանում են առաջ տանել հասարակությունը: Այս իմաստով Գեորգ Բուստյանը, լինելով խորհրդային դպրոցի ներկայացուցիչ, կարողացավ իր

գործունեությամբ շատ սիրուն, ամուրկապ ստեղծել անցյալի և ներկայի միջև»: Ըստ նախարարի՝ «հատկապես փիլիսոփայական միտքը խիստ կարևոր է երկրի, ժողովրդի տեսակի պահպանման համար: Աշխարհի շատ ժողովուրդներ իրենց աշխարհընկալումը ձևավորում են փիլիսոփայության դպրոցների միջոցով»:

զնահատականների՝ որպես հետազոտող, փիլիսոփա և մանկավարժ: Նա մեծ ներդրում ունի կրթության ասպարեզում, պատկառելի տարիքում նա կարողացավ Մանավարժական համալսարանում մեծ գործ անել, մեծ ավանդ բերել մեր գիտությանը», - ասաց ՀՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:



«Բուստյանը ապրեց մեծ, երկար և լեցուն կյանքով, հաջողված կյանք ունեցավ այն առումով, որ կարողացավ երկար տարիներ զբաղվել իր սիրած գործով՝ փիլիսոփայությունը որպես գիտություն, և ստեղծել մի ամբողջ դպրոց, որի գիտական նվաճումները հանրահայտ են ամբողջ աշխարհում: Անգնահատելի են նրա վերջին տարիներ ջանքերը ուղղված փիլիսոփայական գիտության նվաճումների միջազգայնացմանը: Նա արժանացավ բարձր

Նիստում զեկուցումներով հանդես եկան Ինսթրուքի (Ավստրիա) համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, Միջազգային առաջընթաց կազմակերպության նախագահ, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլեյերը, Իոաննիսյանի (Հունաստան) համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի պրոֆեսոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի անդամ Ջորջիա Ապոստոլապուլուն, Հարավային Կոննեկտիկուտի

(ԱՄՆ) պետական համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, հեղինակավոր Metaphilosophy գիտական հանդեսի գլխավոր խմբագիր Արմեն Տ. Մարտուպեանը:

Նոյեմբերի 23-ին կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում կազմակերպվեց գիտաժողովի փակման հանդիսավոր արարողությունը: Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ՀԳՄՀ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա շնորհակալական խոսք հղեց բոլոր նրանց, ում շնորհիվ բրուստյանական հոգին երկու օր թևածեց համալսարանում, ովքեր ակադեմիկոսի կյանքի ու գործի հանդեպ հետաքրքրություն առաջացրին մեր սերնդի մտածողության մեջ: Ամփոփելով ասելիքը՝ նա մեջբերեց պրոֆեսոր Ջիջյանի տողերը Բուստյանին համեմատելով փիլիսոփայության համեմարներից մեկի՝ Դավիթ Անիադի հետ:

«Եթե հայրս կենդանի լիներ, նա շատ գոհ կլիներ այս գիտաժողովի կազմա-



կերպման մակարդակից», - ասաց ակադեմիկոսի աղջիկը՝ Լիլիթ Բուստյանը:

Օրը ամփոփեց Գ. Բուստյանի ուսանող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, ով «դատողություններ արեց կյանքն ապրելու և իմաստավորելու բրուստյանական ձևակերպումների և երջանկության բրուստյանական ըմբռնումների մասին»:

**Սիլվա ԱՄՐՅԱՆ**  
**Սոնա ԱՐԱՍՅԱՆ**

## Մանկավարժական պրակտիկան ուշադրության կենտրոնում

Նոյեմբերի 12-ին և 13-ին Ծաղկածորում՝ ՀՀ Գրողների տանը, կայացավ Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը կազմակերպել էր գիտատեսական սեմինար՝ «Մանկավարժական պրակտիկայի արդի խնդիրները տարրական դպրոցի ուսուցչի ձևավորման համատեքստում» թեմայով:

Սեմինարին մասնակցում էին ոչ միայն վերոնշյալ, այլև բուհի Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ, ՀԳՄՀ Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը և Սկզբնական կրթության ֆակուլտետի ղեկան Հեղինե Խաչատրյանը: Ուշագրավ էր, որ սեմինարին մասնակցում էին նաև բակավորիատի և մագիստրատուրայի ուսանողներ Արմինե Խրոյանը, Անահիտ Հովակիմյանը, Ռուզաննա Ղուկասյանը, ովքեր ակտիվորեն մասնակցեցին իրենց վերաբերող խնդիրների քննարկմանը:

Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը հանգամանորեն ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի հիմնախնդիրները, որին հաջորդեցին մասնակիցներին մտահոգող բազմաթիվ հարցերի քննարկումներ: Այնուհետև զեկուցումներով հանդես եկան Սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժ



ժական պրակտիկայի ղեկավար Արմինե Միքայելյանը (Մանկավարժական պրակտիկայի ընթացակարգի ներկայացուցիչ, անհրաժեշտ փաստաթղթերի քննարկում), ամբիոնի դասախոսներ Աստղիկ Բալայանը («Դպրոցում պրակտիկան կազմակերպող պատասխանատուի գործառնությունները և դրանց իրականացման մեխանիզմները»), Մարգարե Միրունյանը («Մայրենիի դասի կառուցվածքը տարրական դպրոցում. նրա ներկայացումը

պլան-կոնսպեկտում») և Կարինե Աղաբաբյանը:

Աշխատանքային երկու օրվա ընթացքում քննարկվեցին մանկավարժական պրակտիկայի հետ կապված բազմաթիվ խնդիրներ, ծավալվեց հետաքրքիր բանավեճ, եղան առաջարկներ նաև ուսանողների կողմից, ովքեր ներկայումս իրենց մանկավարժական պրակտիկան են անցնում Երևանի տարբեր դպրոցներում:

Սեմինարի արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանը, ձևակերպվեցին բազմաթիվ առաջարկություններ և որոշումներ: Այնուհետև տեղի ունեցավ ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Վարդիթեր Սիմոնյանի «Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք» գրքի գինեծոնը:

Սեմինարի աշխատանքներն ամփոփելուց հետո բոլոր առաջարկները ներկայացվեցին Պրակտիկայի կենտրոն:

Աշխատանքային օրվա ավարտից հետո սեմինարի մասնակիցների ազատ ժամանակը կազմակերպվեց դասախոսների ուժերով. նրանք հանդես եկան ասումներով, երաժշտական կատարումներով և մասնագիտական վիճակագրության հետաքրքրաշարժ հարցերի քննարկմամբ:

Երկօրյա գիտատեսական սեմինարն ավարտվեց, սակայն դասախոսներին հետաքրքրող հարցերի քննարկումն, անշուշտ, կունենա իր շարունակությունը:

Աշխատանքային օրն ամփոփվեց այցելությամբ Կեչառիսի վանք:



ՀԱՅԿԱՆ ԳՐԹՈՆՆԵՐԸ: Ձեկուցողն առանձնացնում է զարգացման խանգարումով երեխաներ ունեցող ընտանիքներին բնորոշ ընդհանրությունները և դիտարկում վերոհիշյալ ընտանիքների տարբեր մոդուլներ՝ դրական ու բացասական դրսևորումներով:

Նա խնդրահարույց է համարում ընտանիքում թիրախային երեխային ուղղված ընտանեկան ռեսուրսների մեծ մասի օգտագործումը զարգացման խնդիր չունեցող երեխային անտեսելու հաշվին, միաժամանակ բարձրաձայնում,

բանական գործոնները: Ձեկուցողն առանձնացնում է զարգացման խանգարումով երեխաներ ունեցող ընտանիքներին բնորոշ ընդհանրությունները և դիտարկում վերոհիշյալ ընտանիքների տարբեր մոդուլներ՝ դրական ու բացասական դրսևորումներով:

Նա խնդրահարույց է համարում ընտանիքում թիրախային երեխային ուղղված ընտանեկան ռեսուրսների մեծ մասի օգտագործումը զարգացման խնդիր չունեցող երեխային անտեսելու հաշվին, միաժամանակ բարձրաձայնում,

զարգացման գործուն: Ս. Մարությանը դպրոցի հանդեպ ծնողի անտարբերությամբ պայմանավորում է նաև երեխայի անտարբերությունը:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լուսինե Պողոսյանի** «Դպրոց-ընտանիք համագործակցության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները» զեկուցման հիմքում 2-3 տարվա ուսումնասիրությունների արդյունքներն էին, որոնց նպատակն էր՝ պարզել ապահով մանկության բաղադրիչները:

# ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԵՐՆԵՐԸ...

➤ **1** հաղթահարման ուղիներ» խորագրով գիտաժողովի մասնակիցները համատեղ քննարկումներով փորձեցին հասկանալ մանկության մեթոդախնդիրները, որոնք ծառայած են ժամանակակից հայ ընտանիքների առջև՝ բացահայտելու դպրոց-ընտանիք կապի ուժեղ ու թուլ կողմերը, միաժամանակ մատնանշելու մարտահրավերներին դիմակայելու ուղիները:

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր **Աիդա Թոփուզյանի** բացման խոսքը և «Ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրումը արդիական պահանջ է» զեկուցումը վերոհիշյալ խնդիրների ամփոփ ներկայացումն էր և դրանց հանդեպ մանկավարժական համակարգված մոտեցումը: Յուրաքանչյուր կրթական տարածքում այդ խնդիրները յուրովի են վերլուծվում և առանձնահատուկ մոտեցում են պահանջում: Գլոբալիզացիայի ժամանակաշրջանում առավել քան հարկավոր է ապահով մանկության խնդիրը դիտարկել՝ կատարելով հետազոտական վերլուծական ուսումնասիրություններ, հենց որին էլ միտված է ՀԱՅԿ-ի մանկության հիմնախնդիրների ուսումնասիրման լաբորատորիայի գործունեությունը:

Մանկության հիմնախնդիրները լավագույնս հասկանալու համար պետք է հայացք գցել հայ մանկավարժության անցյալին՝ համադրելով այն ներկայի պահանջների հետ: Ցավոք, պատմության դասերը երբեմն հասու չեն ներկային, և արդյունքում ծնողը օտարվում է դպրոցից, ընտանիք-դպրոց կապը տարբեր պատճառներով խաթարվում է...

Մինչդեռ՝ «մեր կամքից անկախ» մենք պարտադիր երկու բան ենք ունենում՝ ծնող և ուսուցիչ. ամեն մեկս պատասխանատվություն և պարտք ունենք նրանց առջև, ուստի պետք է մեզմեջ յուրաքանչյուրը գտնի այն գործը, որով կօգնի դպրոցին: Դպրոցը ժողովրդին է, բոլորինը», - փաստում է Ա. Թոփուզյանը և գործընկերներին, խնդրով մտահոգ բոլորին հորդորում տեր կանգնել դպրոցին և հայացքներն ուղղել նույն նպատակի կատարմանը: Նա ներկայներին հանգամանորեն ներկայացնում է ՀԱՅԿ-ի մանկության ժամանակակից հիմնախնդիրները ուսումնասիրող լաբորատորիայի մշակած փաթեթը՝ ապահով մանկության բնութագրիչներով, տարրական դպրոցի համար ծնողական համալսարանի ուսումնական պլանով, ընտանիք-դպրոց կառավարման մոդելով և ուսուցչին ներկայացվող հիմնական պահանջներով հանդերձ:



դաստիարակության ընթացքը:

Մանկավարժական համալսարանի և Երևանի քաղաքապետարանի միջև երեք տարի առաջ կնքվել է համագործակցության հուշագիր, ներկա գիտաժողովն էլ այդ համագործակցության շրջանակներում է: Քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ **Գայանե Սողոմոնյանը** փաստում է, որ համագործակցության արդյունքում հրաշալի արդյունքներ են արձանագրվել, ինչի համար իր շնորհակալական խոսքն է հղում բուհի ղեկավարությանը:

Ըստ Գ. Սողոմոնյանի՝ երեխան աշխարհը ճանաչում է ծնողի, դաստիարակի և ուսուցչի միջոցով, և ընտանիք-մանկապարտեզ-դպրոց ներդաշնակ աշխատանքի արդյունքում միայն հնարավոր է ունենալ պետության համար պիտանի քաղաքացիներ: Նա վստահեցնում է, որ ուսուցիչները առաքյալներ են և որ դպրոց-համալսարան շղթայում համագործակցությունը արդյունավետ աշխատանքի լավագույն երաշխիքն է:

Պլենար միստի մասնակիցները անցնում են օրակարգային զեկուցումներին:

Մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր **Սրբուհի Գևորգյանը** ներկայացնում է «Յուզեմալ դաստիարակությունը և ընտանիքը» զեկուցումը՝ օրենսդրական մի շարք նորմատիվային փաստաթղթերի միջոցով ներկայացնելով տարբեր երկրներում մանկության խնդիրներին վերաբերող կարևոր տեղեկատվություն՝ դրանք համեմատելով ու համադրելով մեր երկրի նմանատիպ փաստերին ու խնդիրներին առանձնահատկություններին:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սիրանուշ Կարապետյանը** հանգամանորեն գաղտնագործում է զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքների հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները՝ ժամանակակից ընտանիքների հոգեբանամանկավարժական բազմատեսակյուն ուսումնասիրություններում կարևորելով սոցիալ-հոգե-

որ «մանկության բազմաթիվ խնդիրներ, որոնք առկա են բժշկական, կրթական և սոցիալական ոլորտներում, նաև պայմանավորված են այն հանգամանքով, որ մեր երկրում դեռևս չկա ծնողների հոգեբանամանկավարժական կրթության, օժանդակության պարտադիր պետական ծրագիր»:

«Ընտանիքի և դպրոցի գործընկերային փոխազդեցությունը որպես կարևորագույն պայման երեխայի ներդաշնակ զարգացման գործում» հետաքրքիր զեկուցումով հանդես է գալիս հոգեբանական գիտությունների թեկնածու **Արմեն Բեջանյանը**՝ իր խնդրահարույց մտահոգություններով խորհելու առիթ տալով ներկաներին:

Առավել քան կարևոր փաստերով, երևույթների վերլուծությամբ կրթության փորձագետ **Սերոբ Խաչատրյանը** ներկայացնում է տեխնոլոգիաների առաջընթացից ետ մնացող կրթական համակարգի բոլոր շերտերը՝ առաջարկելով դրանք հնարավորինս մոտեցնել իրար ժամանակի մրցավազքում, որպեսզի դասը չդառնա անհետաքրքիր աշակերտի համար:

«Այսօր կա անհատապաշտական միտումներ հասարակության մեջ, ավանդականի և անհատականի բախում, որ սոցիոլոգիական և հոգեբանական ուսումնասիրությունները վկայում են ընտանեկան տարբեր խնդիրների մասին և այն մասին, որ ընտանիքը կարիք ունի մասնագետի խորհրդի, մեզանում կա հոգեբանին դիմելու մշակույթի պակաս» -ասում է «Այգ» հոգեբանական կենտրոնի աշխատող, հոգեբանական գիտությունների թեկնածու **Մարիա Թևոնյանը** իր «Ժամանակակից ընտանիքի խնդիրների հաղթահարման հնարավորությունները հոգեբանական խորհրդատվության համատեքստում» զեկուցման մեջ:

Ծնողական խորհրդի նախագահի իր մտահոգություններն է ներկայացնում Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցի աշակերտի ծնող **Սեդա Մարությանը**, ով կարևորում է ուսուցչի, ինչպես նաև ընտանիք-դպրոց համագործակցության աշխատանքը երեխայի կրթության և

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Իգոր Կարապետյանը** անդրադառնում է ընտանիք-դպրոց ֆախիտացիոն (աջակցող) մոդելին՝ ընդգծելով, որ այդ համագործակցությունը չի կարող լինել չաջակցող, և որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կիրառի աջակցման այս մոդելի տեխնոլոգիաները:

«Ուսուցիչը ոչ թե գիտելիքներ պետք է հաղորդի, այլ ուղղորդի աշակերտին», -ասում է պրոֆեսորը՝ արձանագրելով, որ շատ ուսուցիչներ ծախսողում են ուսուցիչ-ծնող-աշակերտ փոխգործակցությունից:

Պլենար միստի վերջին ելույթը ՀԱՅԿ Վ. Թոփուզյանի անվան հմ. 57 հեռակետային դպրոցի դասվար **Լիլիթ Աբրեյանին** էր: Ներկաները ծափողջույններով են ընդունում նրա «Ընտանիքը դպրոցի գործընկերն ու համախոհն է» թեմայով զեկուցումը, որտեղ համալսարանի շրջանավարտը կարևորում է ծնողական համալսարանի ստեղծման անհրաժեշտությունը:

Հագեցած օրակարգով միստը շարունակվում է մասնախմբերի աշխատանքով. «Մանկության հիմնախնդիրը հայ ընտանիքում», մասնախմբի աշխատանքները նախագահում է մանկավարժական գիտությունների դոկտոր Ջուլիետա Գյուլամիրյանը, իսկ «Դպրոցին ներկայացվող ժամանակակից պահանջները ծնողների հետ տարվող աշխատանքներում» աշխատախումբը՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Պողոսյանը: Դպրոցների տնօրենների համար կազմակերպվում է քննարկումների կլոր սեղան, ապա գիտաժողովն ամփոփում է մանկության հիմնախնդիրներին նվիրված աշխատանքային օրվա արդյունքները:

Մեր ժողովուրդը զարմանալի իմաստուն կենսակերպ ունի. բոլոր ժամանակներում, դարեր ի վեր կարողացել է դիմակայել բոլոր մարտահրավերներին՝ իր դպրոցային, իր գրով, իր մշակույթով: Կրթությունը հայ մարդու ապրելու կերպն է, նրա արարող մտքի ու հոգու հարատև ընթացքը...

«Մանուկների աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային, հոգեպարար բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել: Նրանց կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար ու դեռ ավելին», -ասել է մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Մեծ մանկավարժի պատգամի հետ հաշտ՝ գիտաժողովի մասնակիցները հեռանում են՝ նոր, ավելի ակտիվ աշխատանքի լծվելու հաստատ վճռականությամբ:



➤ 1 - Ի՞նչ հաջողություններ են արձանագրվել պեդոլոգների ընթացքում:

- Մասնավորապես հենց այս տարի դամբարանադաշտում գտել ենք մ.թ.ա. 11-10-րդ դարերին վերաբերող մեծ դամբարանային համալիր, որտեղից խեցեղենի, մարդու մնացորդների և այլ իրերի հետ գտնվել են նաև 22 ոսկե ուլունքահատիկներ, 1000-ից ավելի անագից պատրաստված պերճանքի առարկաներ և ուլունքահատիկներ, ինչը վկայում է, որ այդտեղ թաղված է սոցիալական բարձր կարգավիճակի պատկանող մարդ, նաև խոսում է այն մասին, որ հայկական լեռնաշխարհում արդեն 2-րդ հազարամյակի վերջում, 1-ին հազարամյակի սկզբներին վաղ պետական կազմավորումների մի ամբողջ խումբ կար, այդ թվում նաև Արարատյան դաշտում, և Մեծամորը այն ժամանակ գուցե մտել է էթնոմի անունը կրող համադաշնության մեջ, և Մեծամորը քաղաք-ամրոց է, եղել է դրա կարևոր կենտրոններից մեկը:

- Ուրիշ ի՞նչ հնագիտական արշավախմբերի հետ եք աշխատել:



# «ԸՆԿՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՂՐՈՒՄՏ ԵՐԿՐԻ ՄԵՆԱԾՆՈՐԸ Է»

- 2008-2013 թվականներին հայ-ֆրանսիական հնագիտական միջազգային արշավախմբի ղեկավարն էի, աշխատում էի ֆրանսիացիների հետ: Պեդոլոգները կատարում էինք Մեծամորում:

2004-2014 թվականներին հայ-ռուսական հնագիտական արշավախմբի հետ պեդոլոգներ ենք իրականացրել Տաշիրում:

Այս բոլորը Հայաստանի պատմության, մշակույթի տարբեր հատվածներին վերաբերող արշավախմբեր են և որոշակի խնդիր ունեն մեր պատմության և մշակույթի վերականգնման առումով:

- Գաղտնիք չէ, որ Հայաստանի հնագույն պատմամշակույթը հետաքրքրում և գրավում է օտարներին...

- Հայաստանը հնագույն աշխարհի այն կարևոր կտորներից մեկն է, որտեղ անկասկած ձևավորվել է նաև քաղաքակրթությունը, մշակութային բազմաթիվ շերտեր կան, և մեր արտասահմանցի գործընկերներին շատ հետաքրքրում է պատմամշակութային գործընթացների ուսումնասիրությունը: Հատկապես հիմա, երբ Եգիպտոսում Իրաքում, Սիրիայում բարդ քաղաքական իրավիճակներ են ստեղծվել, օտարերկրացիների հայացքը առավել կենտրոնանում է դեպի Կովկաս, մասնավորապես նաև Հայաստան, հնարավոր է, որ օտարերկրացիները կենտրոնանան մեր երկրի վրա, և հատկապես Հայաստանը դառնա ուսումնասիրությունների կենտրոն:

տանը դառնա ուսումնասիրությունների կենտրոն: Ամեն դեպքում մեր լեռն գործընկերները և հատկապես Կշիշտով Յակոբյանը, որը Վարշավայի համալսարանի հնագիտական կենտրոնի տնօրենն է, միաժամանակ լեռն համալեռնավարը ինձ հետ, շատ գործնական է տրամադրված, շահագրգռված է գիտական հետազոտություններին ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցում:

Արտասահմանյան մի շարք պարբերականներում մենք հանրահռչակում ենք պեդոլոգների արդյունքները, ամեն տարի Լեհաստանում և Հայաստանում միջազգային գիտաժողովներ ենք կազմակերպում, քննարկում ենք արդյունքները: Կապերն անընդհատ ընդլայնվում են, ինչն էլ Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության լայն դաշտ է ստեղծում: Լեհական կողմն Արտաշատում բացել է հնագիտական նոր արշավախումբ: Գործընթացը շարունակվում է և միջազգայնացման նոր հնարավորություններ են բացվում:

- Իսկ ինչպիսի՞ն է Հայաստանի ղեկավարության շահագրգռվածությունն ու աջակցությունը:

- Պեդոլոգների այն հատվածը, որ մենք իրականացնում ենք մեր կողմից, գիտության պետական կոմիտեի դրամաշնորհով է: Ճիշտ է, դրանք շատ չեն, բայց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն առավելագույնն է անում, որ օժանդակի մեր աշխատանքներին:

- Դուք մասնագիտությամբ հնագետ եք: Քանի՞ տարի է, որ հնագիտական պեդոլոգներ եք անում:

- Իմ առաջին հնագիտական արշավախումբը սկսել է 1977 թվականին, արդեն 40 տարի է՝ աշխատում են Հայաստանի տարբեր շրջաններում, որից 30-ը Սևանի տարածքում՝ Գավառ, Հացառատ, Լիճք, Նորատուզ, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն...

- Հնագիտական պեդոլոգների ընթացքում ո՞րն է եղել ձեր ամենահետաքրքիր բացահայտումը:

- Դա շատ հարաբերական է: Ինձ համար պատմամշակութային առումով առավել կարևոր է Երանոս գյուղից ոչ հեռու՝ Քանազեղ դամբարանադաշտում հայտնաբերած մ.թ.ա. 15-14-րդ դարերի դամբարանը. հիսուն անց վարպետ մետաղագործի դամբարան բացվեց Սևանի արևմտյան ափին, ուր հայտնաբերեցինք մի ամբողջ համալիր: Վարպետն էր ամբողջությամբ պահպանված, գլխավերևում դրված էր փոքրիկ կավե կթղա, որով հավանաբար բռնվել էր կավե կաղապարի մեջ, գլխի դիմաց դրված էր երկփողանի կաղապար, որով այսօր յոթ տեսակ պերճանքի առարկա կարելի է ձուլել: Ըստ երևույթին ինքը սոցիալական բարձր կարգավիճակ ուներ և մահվան հետ կապված զոհաբերություններ կային:

- Հնագիտությունը զարգացող գիտություն է, ի՞նչ հիմնախնդիրներ կան ուղորտում:

- Հնագիտությունը հարուստ երկրի մենաշնորհ է... Հայաստանում այսօր մասնագետների պակաս կա, մասնագետների ֆինանսավորման խնդիր կա, և երբեմն բուհն ավարտող երիտասարդները, տեսնելով ինչ ֆինանսական ապագա է սպասվում իրենց, սիրելով այս աշխատանքը, այնուամենայնիվ, գնում են շահեկան աշխատանքի: Կա նաև մասնագետների պատրաստման խնդիր. հիմա գիտությունը շատ է առաջ գնացել. միայն բահով ու վրձնով ոչինչ չես կարող անել. ժամանակակից հնագիտությունը հենվում է քիմիական հետազոտությունների, ածխածնային անալիզի և այլ հետազոտությունների վրա: Դա կարևոր մասնագիտություն է, որը կոչվում է պոլիմոլոգիա: Մենք պոլիմոլոգիայի մասնագետ չունենք և դիմում ենք վրացի գործընկերներին: Այդ մասնագետը պահպանված անոթների նստվածքները քերելով կարողանում է որոշել թե հազարավոր տարիներ առաջ մարդիկ ինչ են կերել: Հնակենդանաբանի, հնաբուսաբան հնագետների կարիք ունենք: Լավ է որ լեհական կողմի հետ համագործակցության շրջանակներում արդեն ունենք Վարշավայում վերապատրաստված երեք մասնագետ՝ վերապատրաստված հնակենդանաբան, խեցեղենի մասնագետ և ճարտարապետական չափագրումներ իրականացնող պատմաբան:

- Մեր համալսարանում կա՞ հնագետի մասնագիտացում:

- Մասնագիտացում չունենք, բայց առարկան անցնում են պատմության և իրավագիտության, ինչպես նաև կուլտուրայի ֆակուլտետների առաջին կուրսերում: Ես երկու ֆակուլտետներում էլ դասավանդում եմ:

- Հայաստանում այդ մասնագետներին պատրաստում են ԵՊՀ-ի հնագիտության ամբիոնը և ՀՀ ԳԱԱ-ն:

- Մեր համալսարանում հնագիտությամբ հետաքրքրվող ուսանողներ կա՞ն:

- Ես շատ հավանում եմ այս սերնդի երիտասարդներին: Եթե ամեն եկող սերունդ նախորդից լավը չի, ուրեմն այդ ժողովուրդը մեռնող ժողովուրդ է: Շատ գոհ եմ մեր բուհի ղեկավարությունից և ուսանողներից: Մեր ուսանողները և շրջանավարտները պարբերաբար մասնակցում են պեդոլոգներին և՛ Երեբունիում, և՛ Մեծամորում: Ես տեսնում եմ լավ երիտասարդների: Մեր շրջանավարտներից և իմ ուսանողներից Բաղայան Միքայելն արդեն իմ գործընկերն է, մեր մյուս շրջանավարտը Արտավազը Չաքյանն է, ով զբաղվում է հնագիտությամբ: Նաև նրանց մասնակցությամբ ենք հաջողությունների հասնում: Ես աշխատանք են տարել, որ իմ գործը շարունակողներ լինեն:

- Ի՞նչ կուզեիք ավելացնել:

- Շատ կուզեի, որ մեր երիտասարդները ընտրեին այն մասնագիտությունը, որին մինչև կյանքի վերջը սիրով կծառայեին:

- Ի՞նչ է Ձեզ համար հնագիտությունը:

- Հնագիտությունն ինձ համար մասնագիտություն է, պրոֆեսիա, և ես այդ պրոֆեսիոնալ բառը չեմ համատեղում արհեստավարժության հետ: Իսկական պրոֆեսիոնալ, ով գիտի խնդիրները, ականջահաճո, ամպագոռո հայտարարություններ չի անում, այլ կոնկրետ աշխատում է իր երկրի պատմության մշակութային նյութի վրա՝ այն հաստատ համոզմունքով, որ մենք մեր հիմնավոր ու բարձր տեղն ունենք համաշխարհային մշակույթում, և որևէ մեկը չի կարող այն կեղծել:

Ջրույցը Սիլվա ԱՄՐՅԱՆ



Պատմության և իրավագիտության ֆակուլտետում ավանդական է դարձել «Հայոց պատմություն» առարկայից օլիմպիադայի կազմակերպումը: Այս տարի օլիմպիադային մասնակցում էին Երևանի և ՀՀ մարզերի դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտներ:

Պատմության արդյունքները՝ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկան Էդգար Հովհաննիսյանը նկատեց, որ մասնակիցների թիվն այս տարի եռապատկվել է: Դեկանն աշակերտներին ներկայացրեց բուհում ներդրված առցանց ուսուցման նոր համակարգը, բուհի միջազգային կապերը, կրթության ընթացքում տրվող հնարավորություն-

## Օլիմպիադա «Հայոց պատմություն» առարկայից

ները և այլն:

«Այս օլիմպիադան խթանում է աշակերտների առաջընթացը. այն նախառաջ նրանց համար փորձ է ընդունելության քննություններից առաջ, քանի որ ներկայացված թեստերը մշակված են ընդունելության քննության թեստերին համապատասխան, ինչպես նաև որոշակիորեն կողմնորոշիչ է բուհի ընտրության հարցում», - ասաց ղեկանը: Աշակերտները շրջեցին բուհում, եղան թանգարանում և գրադարանում, դիտեցին համալսարանի մասին պատմող ֆիլմ:

Ի դեպ, նախորդ տարվա օլիմպիադայի հաղթողներից 4-ն արդեն ֆակուլտետի 1-ին կուրսերի ուսանողներ են: Նոյեմբերի 30-ին ամփոփվեցին համարակետական օլիմպիադայի արդյունք-

ները:

Յուրաքանչյուր տարիքային խմբում բարձր միավորներ հավաքած տասնյակին հանձնվեցին հավաստագրեր և նվերներ, ինչպես նաև ֆակուլտետում ուսումնառության ժամանակ որոշակի զեղչից օգտվելու հնարավորություն:

Առավելագույն միավորներ ստացած 3-ական մասնակիցներն արժանացան թանկարժեք նվերների և 30-50 տոկոսի չափով զեղչից օգտվելու հնարավորություն: Հաղթողներին շնորհավորեցին բուհի պրոռեկտոր Սիեր Մելիք-Բախչյանը, Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկան Էդգար Հովհաննիսյանը և Հայոց պատմության ամբիոնի վարիչ Աշոտ Փիլիպոսյանը:



# «Լեզուներ սովորել, բայց ոչ մեր մայրենի լեզվի հաշվին»,

## –ասում էր Բելլա ՄԱՐԿՈՎՆԱՆ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բելլա Մարկի Եսա-ջանյանի մարդկային տեսակի, մասնագիտական և գիտական գործունեության մասին կարելի է երկար խոսել: Նա Հայաստանի Հանրապետությունում ռուսաց լեզվի գծով առաջին դոկտոր, պրոֆեսորն էր. ուն գրքերով սերունդներ են կրթվել. ավելի քան 30 դասագիրք, 315 տպագրված գիտական աշխատանք, 6 մենագրություն:

Բելլա Մարկովնայի գիտական և մանկավարժական գործունեությունը սերտորեն կապված է Մանկավարժական համալսարանի հետ: Նա երկար տարիներ ղեկավարել է համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնը և նվիրումով աշխատում էր մինչև իր կյանքի վերջին տարիները:

Գործընկերները նրա մասին խոսելիս չեն արողանում թաքցնել հուզմունքը: «Բելլա Մարկովնան այն եզակի մարդկանցից էր, ով գիտեր բոլոր առարկաների մասին և որոնց մասին խոսելիս միշտ նոր մի բան էր բացահայտում մեզ համար: Նա լեզվաբան էր, բայց փայլուն գիտեր գրականություն, փայլուն գիտեր պատմություն,- ասում է Օտար լեզուների ֆակուլտետի Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Իննա Սարգսյանը, ով եղել է պրոֆեսորի ասպիրանտը: Ուրիշ հայացքով էր նայում աշխարհին: Երկար տարիներ աշխատել էր դպրոցում և մանուկների հանդեպ սերը նա փոխանցեց ուսանողներին և աշխատողներին»:

Չափազանց նորարար էր գիտության մեջ: Անչափ բարի ու դրական կին էր ցանկացած միջավայրում, և այդ բարությունն արտահայտվում էր նրա գործունեության մեջ, ցանկացած աշխատանքում: Երկար տարիներ նա ղեկավարել է Ռուսաց լեզվի ամբիոնը. լավ ղեկավար էր և ամեն ինչ ճիշտ էր անում: Նա իր ներկայությամբ լավ մթնոլորտ էր ստեղծում թե՛ աշխատավայրում, թե՛ տանը: Գաղափարների հզոր շարժիչ էր, առաջ մղող ուժ: Մշտապես օգնում էր գործընկերներին, ասպիրանտներին: Նա գիտեր ասպիրանտներից յուրաքանչյուրին ինչ է պետք, խնամքով գրքեր էր ընտրում նրանց համար և նշում էջերը: Հետաքրքրվում էր նրանց անձնական խնդիրներով, բայց երբեք անձնականը չէր խառնում աշխատանքին:

Նա հավատում էր բոլորի և իր ուժերին, և այդ հավատը այնքան ներշնչող էր: Մենք շատ բան սովորեցինք նրանից:

Բելլա Մարկովնան արդեն 86 տարեկան էր, բայց չափազանց ընդգծված կենսուրախությամբ ու կենսասիրությամբ սիրում էր մասնակցել բոլոր միջոցառումներին: Երիտասարդներին օգնում էր հոգվածներ տպագրել տարբեր միջազգային պարբերականներում, քաջալերում էր նրանց, հորդորում խորանալ գիտության մեջ: Կարողանում էր անզուսպ ուրախանալ իր միջավայրի մարդկանց հաջողություններով: 50-ից ավելի ասպիրանտ ուներ, և դա խոսում է գիտնականի նրա կերպարի մասին:

Համազգային շարժման տարիներին, երբ ռուսաց լեզուն հալածվում էր, նրա շնորհիվ լեզուն պահպանեց իր կենսունակությունը: Նա համառորեն պայքարեց ռուսաց լեզվի պահպանման ու զարգացման համար: Պրոֆեսորը մեծ հայրենասեր էր և սիրում էր կրկնել՝ պետք է լեզուներ սովորել, բայց ոչ մեր մայրենի լեզվի հաշվին, այլ մայրենիի հիմքի վրա: Ինքն էլ լավ էր տիրապետում մաև անգլերենին:

Սիրում էր ասունքել: Վերջին անգամ, երբ հյուր էինք նրա տանը, տխուր բանաստեղծություններ էր կարդում: Երբ հարցրինք՝ ինչու է այդքան տխուր, նա ասաց. «Задержалась я на этом свете».

Նա լավ կին էր, լավ տատիկ, լավ մայր, լինելով տոհմիկ գյուրեցի՝ նա հաստատ դեմ կլիներ այս օրերին ռուսաց լեզվի դեմ շահարկումներին»:

«Առաջին հերթին նա մեծ գիտնական էր», - ասում է դասախոս Դավիթ Ղարիբյանը՝ զարմանալով, թե այդ տարիքում մարդը ինչպես կարող էր գիտության նորարարություններին այդքան մոտ լինել և այդքան շատ իմանալ:

«Որպես մարդ, որպես գիտնական Բելլա Մարկովնան անգերազանցելի էր: Նրա վաստակը անգնահատելի է լեզվաբանության և ռուսիստիկայի մեջ: Հիանալի դասախոս, հիանալի մասնագետ, հիանալի մեթոդիստ: Հրաշալի լեզվաբան էր, լավ խոհարար, հյուրասեր կին: Ամեն տարի հունվարի 2-ին և ծննդյան օրը մենք այցելում էինք նրան: Տանը նույնպես տաք ու ջերմ մթնոլորտ էր ստեղծում, ինչպես ամբիոնում:

Հպարտությամբ կարող ենք հիշել այն մեծ ներդրումն ու վաստակը, որ նա ունի ամբիոնի կայացման և հաջողությունների ձեռքբերման գործում: Նրա ղեկավարման տարիներին ամբիոնի մթնոլորտն այնպիսին էր, որ բոլորս սիրում աշխատում էինք, ոչ մեկի հետ հակասություններ չուներ, բոլորի հանդեպ ուշադիր էր:

Օբսֆորդի համալսարանի անդամ էր, Տարվա կին: Նրա վաստակը գնահատվել է, գնահատվում է և դեռ կգնահատվի ժամանակի մեջ»,- ասում է Բելլա Մարկովնայի ավելի քան 30 տարվա ընկերուհի, գործընկերուհի, ՀՊՄՄ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Արամովա Սվետլանա Վլադիմիրովնայի՝ հուզմունքով փաստելով, որ նրա մասին լուսավոր հիշողությունները միշտ կպահեն իրենց հոգիներում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



# Ֆավալի կորուստ

Մանկավարժական համալսարանը նոր կորուստ կրեց. կյանքից հեռացավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Կրյուչկյանը: Հուլիս 5 տարի նա դասավանդում էր Մանկավարժական համալսարանի ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

Գագիկ Կրյուչկյանը գիտական աշխատանքներ է հեղինակել լազերային ֆիզիկայի, քվանտային օպտիկայի և քվանտային ինֆորմացիոն տեխնոլոգիաների, կոմպլեքս համակարգերի մոդելավորման և համակարգչային ֆիզիկայի ոլորտներում: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատանքների, որոնց մեծ մասը տպագրվել է բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում:

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Գագիկ Կրյուչկյանը երկու անգամ՝ 2001 և 2012 թ-ին, բնական և ձգձիգ գիտությունների բնագավառներում արժանացել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի:

1986-ից ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի քվանտային օպտիկայի և քվանտային ինֆորմատիկայի լաբորատորիայի վարիչն էր:

# Հանդիպեցին ռեկտորի հետ

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Սիրախանյանը հանդիպեց բուհի վոլեյբոլի աղջիկների հավաքականին, որը վերջերս մասնակցել էր Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի «Ռեկտորի գավաթ» առաջնությանը և նվաճել Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի գավաթը:

Հնորիավորելով և շնորհակալություն հայտնելով ուսանողներին հաղթանակի առթիվ՝ Ռուբեն Սիրախանյանը խոսեց ապագա պլանների մասին՝ նկատելով, որ ամռանը փոխադարձ իրավերով մեզ մոտ կհյուրընկալվի Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի վոլեյբոլի թիմը, միաժամանակ նախատեսվում են մրցումներ համագործակից մյուս բուհական հաստատությունների թիմերի հետ ևս:

«Շատ մարզվեք և գրանցեք լավ արդյունքեր», - այս մտաբանքով էլ ռեկտորը իրաժեշտ տվեց ուսանողներին՝ նրանց հանձնելով նվերներ:

Շախմատի և սպորտի ամբիոնի դասախոս, թիմի մարզիչ Ջառա Պետրոսյանը նկատեց՝ չնայած թիմում տարբեր մասնագիտությունների և կուրսերի ուսանողներ են, սակայն թիմային ոգու և համախմբվածության արդյունքում կարողացան հաղթել: Թիմի ավագ Ամինա Առաքելյանն էլ հաղթանակը սպասված համարեց: «Լավ պատրաստված էինք և տրամադրված էինք հաղթելու: Համախմբված, լավ խաղի արդյունքում հաղթանակը իրեն երկար չսպասեցրեց», - ասաց Ամինան և հավելեց, որ աայս խաղն առածնահատուկ էր և լավ փորձ իրենց համար:



# «Classroom»՝ ժամանակի թելադրանքով

Մանկավարժական համալսարանում ներդրված էլեկտրոնային նոր համակարգի շրջանակում բուհի էլեկտրոնային կրթության կառավարման բաժնի նախաձեռնությամբ մեկնարկեց «Դու և Classroom-ը» խորագրով հանդիպումների շարք: Առաջին հանդիպմանը ներկա էին Բանասիրական, Պատմության և իրավագիտության, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետների Classroom-ի պատասխանատուները, բուհի ուսանողական կառույցի ներկայացուցիչներն ու տարբեր կուրսերի ավագները:

Ուսանողները ծրագրի վերաբերյալ իրենց հուզող հարցերն ուղղեցին և հանդես եկան առաջարկներով, մասնավորապես՝ դասախոսությունների և հանձնարարությունների ժամկետների, գնահատման համակարգի հստակեցման, առաջադրանքները թղթային կամ առցանց հարթակում հանձնելու ընտրության, համակարգում ուսանողների ակտիվության գնահատման և այլ հարցերի վերաբերյալ:

Էլեկտրոնային կրթության կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանը նկատեց, որ ձեռնարկի նպատակն է ներկայների հետ քննարկել Google classroom-ի գործարկման ընթացքը, առաջնային խնդիրներն ու նախաձեռնել ծրագրի վերաբերյալ ստորաբաժանման հետագա քայլերը: Նա մանրամասնեց համակարգի ընդհանուր հնարավորությունները՝ նկատելով, որ էլեկտրոնային մասնակազմության միջոցով դասախոսի հետ կապ հաստատելն ու տեղեկատվական ռեսուրսներից օգտվելը ժամանակի թելադրանք է, միաժամանակ ընդգծելով՝ բաժնի կողմից մշակվում է հստակ ընթացակարգ, որն առաջիկայում կլուծի առկա խնդիրներն ու առավել լայն հնարավորություններ կտա համակարգի գործարկման, էլեկտրոնային դասընթացների պատշաճ կատարման համար:

«Դու և Classroom-ը» խորագրով հանդիպումները կկրեն շարունակական բնույթ: Սոնա ԱՐԱՍՅԱՆ



### Հաղթեցին արյան կանչով



Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ պրոֆեսոր Յուրան Պատրիկյանի «Արյան կանչով» գրքի շնորհանդեսը: Գրքում ներկայացված է Մանկավարժական համալսարանի շրջանավարտների, դասախոսների, աշխատակիցների և ուսանողների մասնակցությունը 1989-1994 թթ.-ի Արցախյան պատերազմին: Պատերազմի մասնակիցների, նրանց հարազատների, մարտական ընկերների, հրամանատարների հետ զրույցների և բազում անտիպ փաստերի ուսումնասիրության արգասիքն է գիրքը, որտեղ նաև անդրադրված է կատարվել Արցախյան պատերազմի մասնակից ազատամարտիկ-համալսարանականների գերդաստանների ծագումնաբանական պատմական անցյալին: Տեր Թորգոմ վարդապետի գլխավորությամբ տեղումնակն աղթերով էլ ազդարարվեց գրքի շնորհանդեսը:

Գրքի մասնագիտական խմբագիր, ազատամարտիկ, գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը, խոսելով Արցախյան շարժման մասին, նկատեց, որ հենց այդ պահից սկսած հայ ժողովուրդը միասնականացավ ու լուծեց իր խնդիրը: «Այդ օրերին բոլորի հետ միասին իր ներդրումն ունեցավ նաև Մանկավարժական համալսարանը: Արվյանականներն էլ բոլորի հետ միասին ուսի տված տարբեր ճակատներում հաղթանակեցին: Նրանց արարքն այնպիսին էր, որ ինչ-որ մի օր պետք է այդ ամենը նրանց վերադարձնեին»,- ասաց Տիգրան Պետրոսյանցը: Նա ընդգծեց, որ մինչ գրքում համապարփակ ձևով բոլոր հոգվածների ներկայացվելը, դրանք տպագրվել են «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթում:

«Ցանկացած պատերազմ տանում է ամենալավագույններին, ցանկացած պատերազմ ծնում է հաղթողներ: Այսօր ներկա ուսանողները պարտավորվածություն ունեն այս երկիրը պահելու ու պահպանելու այնպես, ինչպես իրենց

նախորդները»,- ամփոփեց նա:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանն արժևորելով գիրքը՝ ասաց. «Սեփական հողը չզիջել թշնամուն, միասնաբար ձեռք բերել հաղթանակ, պահել սերունդների արժանապատվությունն ու հպարտանալ ազգի արժանապատվությամբ»: Պրոֆեսորը երիտասարդներին հորդորեց «Արյան կանչ»-ն ունենալ իբրև սեղանի գիրք և հաճախ ընթերցել, որովհետև դա երրուների արյան կանչն է:

Հայաստանի ազգային հերոս Մովսես Գորգիսյանի այրի Ռուզաննա Գորգիսյանը Արցախյան պատերազմը հայ ժողովրդի մեծ երազանքի կատարման մի մասը համարեց: «Դուք կատարեցիք 70-ամյա հայի և 50-ամյա մանկավարժի ձեր պարտքը ձեր արյան կանչով: Հաղթեցինք ձեր արյան կանչով ու միշտ կհաղթենք մեր արյան կանչով»,- այս խոսքերով

Ռուզաննա Գորգիսյանը դիմեց գրքի հեղինակին և շնորհակալություն հայտնեց նման գիրք ստեղծելու համար:

Գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր հանուն մեր այսօրվա ազատ ու անկախ երկրի իրենց կյանքը զոհեցին:

«Պատերազմում հաղթում են ոչ թե զենքով, այլ գիտելիքով. կրթվեք, իմացեք հայրենիքի պատմությունն ու եղեք միասնական»,-հորդորեց Մուրադ Սարգսյանն ու հավելեց, որ պատերազմը փոխվել է, և բոլորս պետք է լինենք կիրթ փիլանագետներ և մեր սերունդներին փոխանցենք ճշգրիտ պատմություն:

«Պատմությունը միշտ արթուն է և հիշեցնում է, որ մենք պարտք ենք անցյալի, ներկայի և գալիքի հանդեպ: Պատմության վկա հայը բոլոր ժամանակներում խաչ ու գիր է պաշտել, քան տուրը: Արցախյան ազատագրական պայքարին միացած Մանկավարժական համալսարանի կամավորական ուսանողական-մարտական ջոկատները, առաջնորդվելով նախնիների արյան կանչով և հարազատ կրթօջախում ստացած հայրենասիրական դաստիարակությամբ, վրեժը սրտներում մարտի ելան թշնամու դեմ ցուցաբերելով արիություն և խիզախություն, գործելով սխրանքներ»,- ասաց գրքի հեղինակ Յուրան Պատրիկյանը՝ մեջբերելով Գարեգին Նժդեհի խոսքերը. «Հայրենիքն է շնորհում մարդուն հպարտանքներից ամենաարդարը, ցավերից ամենախորը, պաշտամունքներից ամենապիսառը և մահերից ամենատուրը»:

Շնորհանդեսից առաջ ծաղկեպսակ դրեցին բուհի Արցախյան պատերազմի նվիրված հուշակոթողի մոտ՝ իբրև հարգանքի և իշատակի տուրք:

«Արյան կանչով» գիրքը լույս է տեսել Մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի երաշխավորությամբ և բուհի հովանավորությամբ:

Ստնա ԱՐԱՍՅԱՆ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԶԵԼՅԱՐԻՆՍԿՈՒՄ


Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը ՌԴ Չելյաբինսկի պետական մշակույթի ինստիտուտում կայացավ «Երիտասարդությունը XXI դարի գիտության և մշակույթի մեջ» խորագրով միջազգային XV գիտաստեղծագործական համաժողով:

Բացման խոսքում ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Յա. Ռուչանին նշեց, որ ավանդական դարձած ֆորումի աշխատանքներին ՄՊՀ և արտասահմանյան երկրներից՝ Ռուսաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ուկրաինայից, Տաջիկստանից, Հայաստանից, Ուզբեկստանից, Շվեյցարիայից, Իտալիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Մեքսիկայից, Իսպանիայից, Իրանից, Հնդկաստանից, Իսրայելից, Չինաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից իրենց մասնակցությունն են բերել գիտության, կրթության և մշակույթի ոլորտների հարյուրավոր ներկայացուցիչներ:

Համաժողովի լիագումար նիստում «Մատենադարան. պատմություն և արդիականություն» թեմայով զեկուցմանը հանդես է եկել նաև Հայաստանից հրավիրված ՀՊՄՀ պրոֆեսոր Գագիկ Սուքիսյանը, ով ընդգծել է հայ գրքի ու մատենագիտության բազմադարյա ուղու, հայագիտական և համաշխարհային քաղաքակրթական նշանակության, ինչպես նաև Մատենադարանների զարգացման օրինաչափությունները, նրանց պատմամշակութային, տեղեկատվական, ճանաչողական և ուսանելի դերը Հայաստանում, հայկական սփյուռքում և Արցախում:

Համաժողովի տասից ավելի մասնաճյուղերում, ինչպես օրինակ՝ «Փիլիսոփայությունը և փիլիսոփայական հետազոտությունները ժամանակակից քաղաքակրթության ռազմավարական և մարտահրավերների պայմաններում», «Տեղեկատվական հասարակարգի հումանիտար խնդիրները», «Գրադարանային-տեղեկատվական գործունեություն. հետազոտության արդիական խնդիրները», «Խնդիրներ, որոնցում են բացահայտություններ պատմագիտության մեջ», «Բուհի շրջանավարտի սոցիալական ակտիվության զարգացումը. ռեսուրսներ և ռիսկեր», «Էթնոմշակութային կրթություն» և այլն, ներկայացվել էր շուրջ 200 զեկուցում (լույս են տեսել առանձին ժողովածուով) բովանդակային յուրովի առանձնահատկություններով ու մեկնաբանություններով: Դրանցից են՝ «Մարդը՝ փաստաթղթավորված. Ես-մարդու փաստաթղթերը XXI դարում» (Դ. Ա. Մորդովիան, Վ. Ս. Նեվելս), «Մշակույթը ժամանակակից աշխարհում» (Ֆ. Ս. Ջիյան), «Հումանիտար գիտությունների ուսուցման կարևոր ասպեկտները մասնագետների մախապատրաստման մեջ» (Ռ. Ն. Մադալիևա), «Տեղեկատվական պահանջներ. զարգացման խնդիրները» (Գ. Ա. Սուքիսյան), «Աղբյուրները Տաջիկստանի խորհրդային մատենագիտության մասին» (Կ. Բ. Բուրիև), «Հաղորդակցության ոլորտները և տեսակները» (Ն. Է. Մուխամադև) և այլն:

Ձեկուցողները՝ գիտությունների դոկտորներ ու թեկնածուներ, ասպիրանտներ, հայցորդներ և ուսանողներ, տարբեր տեսանկյուններից ձգտել են առաջադիր խնդիրներին տալ հիմնարար պատասխաններ, բովանդակալից և համոզիչ դարձնել մատուցվող նյութը, շեշտել են հիմնահարցերի տեսական, պատմական ու մեթոդաբանական նշանակությունը ներկայի և ապագայի զարգացումներում: Այդ առումով ֆորումն ուներ գիտական կայն հետաքրքրու-



յուն և գործնական կարևոր նշանակություն:

Ինձ համար առանձնահատուկ նշանակություն ունեցան նաև գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության հարցերով Չելյաբինսկի պետական մշակույթի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ հանդիպումները: Հատկանշական է, որ «Գրադարանային-տեղեկատվական գործունեություն» մասնագիտական բաժնի ուսուցանվող առարկաների շարքում գլխավոր տեղ են հատկացվել «Գրադարանագիտությանը», «Մատենագիտությանը», «Փաստաթղթագիտությանը», «Գրադարանային ֆոնդերին», «Գրադարանային ժուռնալիստիկային», «Գրադարանային-մատենագիտական երկրագիտությանը» և հարակից այլ առարկաներին: Ըստ կրթական չափորոշիչների տվյալ մասնագիտական որակավորման բակավոր շրջանավարտը պետք է կարողանա ձևավորել, մշակել և դասակարգել տեղեկատվական ռեսուրսներն ու փաստաթղթային (գրքային) ֆոնդերը, ապահովել նրանց պահպանությունը, իրականացնել օգտվողների գրադարանային-տեղեկատվական ծառայություն, մշակել տեղեկատվական միջավայրի զարգացման այլընտրանքային մախագծեր ու ծրագրեր, անցկացնել ուսումնասիրություններ՝ կապված գրադարանային-մատենագիտական գործի կարևոր խնդիրների հետ: Այդ տեսանկյունից տպավորիչ էր ամբիոնների գործունեությունը: Իսկ գրադարանը հատուկ դեր ուներ բուհի համակարգում՝ սպասարկման, ընթերցանության և ստեղծագործելու ազատ հնարավորություններով:

Համաժողովի շրջանակում կատարվեցին մտքերի փոխանակումներ, կարևոր հիմնահարցերի քննարկումներ: Մի կողմից՝ բարձր գնահատվեց բազմազգ ժողովուրդների մշակութային ծառանգության պատմական և կրթադաստիարակչական դերը, մյուս կողմից՝ մշակույթների ներթափանցման ճանապարհով տեղեկատվական կապերի և փոխհաղորդակցությունների զարգացումը, մեկ այլ տեսանկյունից երիտասարդության ուշադրությունը հրավիրվեց ապագայանետ և առավել հրատապ թեմաների ուսումնասիրության վրա: Այս ամենն, անշուշտ, վկայում են բուհերի միջև համագործակցությունների ընդլայնման, ինչպես նաև առաջավոր փորձի փոխանակման մասին:

Գագիկ ՍՈՒՔԻՍՅԱՆ  
և Արվյանի անվան ՀՊՄՀ  
պրոֆեսոր



# ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ



Մանկավարժական համալսարանի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի հիմնադրման ու կայացման գործում մեծ դեր ունի սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Արսենի Գասպարյանը, ում ջանքերով ամբիոնը նաև իր ներդրումն է բերել Հայաստանի Հանրապետությունում սոցիոլոգիական գիտության զարգացման ու տարածման գործին:

Այդ աշխատանքը բարձր գնահատվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, որը մանկավարժ գիտնականին պարգևատրեց ԿԳ նախարարության Ոսկե մեդալով:



## Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանում

Լ. Ս. Վիգոտսկու 120-ամյակի շրջանակներում նոյեմբերի 7-17-ը Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանում կազմակերպված «Պատմամշակութային հոգեբանություն և կրթության մեջ գործնական մոտեցում» ծրագրով միջազգային աշնանային դպրոցին մասնակցեցին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 5 և բակալավրի 8 ուսանողներ:

## Ոչ միայն տեսական գիտելիքներ

ԼՂՀ-ի Մարտունի քաղաքի № 1 միջնակարգ դպրոցի աշակերտները հյուրընկալվեցին Մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում: Նրանք շրջեցին համալսարանում, ծանոթացան բուսի և ֆակուլտետի կառուցվածքին, եղան թանգարանում, ինչպես նաև Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի փորձարարական լաբորատորիաներում: Ուսանողների օգնությամբ աշակերտներն իրենց ձեռքով փորձեր կատարեցին: «Եռագույն դրոշ», «քիմիական էսկիմո», «հրաբուխ», «քիմիական արյուն», «քիմիական փրփուր» և այլ փորձերի շնորհիվ աշակերտներն իրենց տեսական գիտելիքներ կիրառեցին նաև գործնականում:



Ի դեպ, Մարտունի քաղաքի դպրոցի սաները Երևան էին ժամանել՝ մասնակցելու Պատանի քիմիկոսների համահայկական 7-րդ մրցաշարին:

Մարտունու № 1 դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը և քիմիայի, կենսաբանության ու սուցչուհի Կարինե Կարապետյանը այցը շատ տպավորիչ համարեցին: «Երեխաները շատ են սիրում քիմիա առարկան, սակայն գործնական պարապմունքների հնարավորությունը դպրոցում հաճախ չենք ունենում: Տեղում տեսնելով առարկան իր ողջ հետաքրքրությամբ՝ նրանք կսկսեն առավել հետաքրքրվել առարկայով,» - ասաց Կարինե Կարապետյանը:

# «Յուրաքանչյուր պարզև ինձ համար թանկ է»

➤ 1 Չեմպիոնը նախ անդրադարձավ «Սպիտակ արջ» մականվանը՝ ընդգծելով, որ այն առաջին անգամ ասել է մարզական մեկնաբան Կարեն Գիլյանը, որն էլ կապված է արտաքին տվյալների և սպիտակ արջերին հատուկ գերիզոյր ուժի հետ: Խոսելով երազանքների մասին՝ չեմպիոնը նկատեց, որ մանկուց ամեն օր երազել է օլիմպիական չեմպիոն դառնալու մասին և մի օր վերջապես հասել է դրան:



Սպորտով զբաղվելու ձգտումը ևս մանկուց է եղել՝ պայմանավորված հոր գործով. նա ևս ընթացմարտիկ է եղել: «Հաղթանակներիս մեջ մեծ տեղ ունի իմ ընտանիքը, մասնավորապես հայրս, ում շնորհիվ ես ընտրել եմ այս ուղին», - ասաց Արթուր Ալեքսանյանը: Երբևէ սպորտը լքելու մասին հնչած հարցին ի պատասխան՝ Արթուրը նշեց, որ գործունեության ընթացքում բազմիցս հիասթափվել է, սակայն ոչինչ չի կարող իրեն հեռացնել սպորտից: Իսկ եթե ընտրության առաջ կանգնի՝ սպորտ, թե՛ սեր. չեմպիոնը գյուրեցիներին հատուկ հունորով պատասխանեց՝ միանշանակ սերը:

Բազում հաջողությունների հասած մարզիկն իր հաջողությունների խորհրդանիշը համարեց նաև օրհնված խաչը, որը միշտ իր հետ է, նաև օգնում է հաղթելու մեծ կամքը. «Յուրաքանչյուր մրցույթից առաջ տրամադրվում եմ, որ ամեն գնով պետք է հաղթեմ, իսկ թե արդյունքն ինչպիսին է լինում, արդեն երևում է վերջում, սակայն միշտ մրցակցիս հաղթելու ցանկությամբ եմ դուրս գալիս մարտի»:

Արթուր Ալեքսանյանն իր բոլոր մրցաշարերից հատկապես առանձնացրեց հենց օլիմպիական խաղերը՝ ընդգծելով, որ բացի ֆիզիկական պատրաստվածությունից, շատ կարևոր է նաև հոգեբանական պատրաստվածությունը. «Կա հուզմունք, լարվածություն, բայց փորձի միջոցով պետք է շրջանցես դրանք»:

Օլիմպիական խաղերին պատվո պատվանդանի առաջին աստիճանին չեմպիոնը կանգնեց Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանի նկարով շապիկով: «Օլիմպիական հաղթանակը նվիրել եմ սահմանին կանգնած հայ զինվորին և պատերազմի բոլոր զոհերին. սպորտի պատերազմական գործողություններից շատ էի ազդվել և որոշել էի միայն առաջին հորիզոնականը գրավելու դեպքում դուրս գալ այդ շապիկով: Մեր զինվորներն արժանի են լավագույնին, նրանք հաղթանակած զինվորներ են», - ասաց Արթուր Ալեքսանյանը:

Որն է կյանքի մեծագույն հաղթանակը հարցին՝ Արթուրը պատասխանեց՝ իր գիտակցական կյանքը կապված է սպորտի հետ և սպորտային բոլոր հաղթանակները վերագրում է նաև կյանքի հաղթանակներին:

Ուսանողները մեկը մյուսին հերթ չտալով հարցեր էին ուղղում չեմպիոնին՝ կնոջ իդեալից մինչև սիրած քաղցրավենիքը: Իսկ համարձակ ուսանողները Արթուրին հենց բեմում հյուրասիրեցին իր իսկ սիրած քաղցրավենիքով: Չեմպիոնի հետ պատմական լուսանկարով էլ ուսանողները հրաժեշտ տվեցին «Սպիտակ արջին»՝ սպասելով նորանոր հաղթանակների և ձեռքբերումների:

Ստնա ԱՐԱՍՅԱՆ

## Ասք ու լեգենդ դարձան

«Անկախությունը թանկ արժեք է, որը պետք է պահպանել: Սիրելի՛ ուսանողներ, դուք երջանիկ սերունդ եք, որ ծնվել եք անկախության տարիներին: Շատ հայրողիներ իրենց կյանքը նվիրաբերեցին Հայաստանի անկախությանը՝ նրանք ընկան, որպեսզի արշալույսները խաղաղ լինեն մեզ համար և հետո աղբյուր հուշարձաններ դարձան, ասք ու լեգենդ դարձան ու ամեն մեկն անմահ պահեց մի հերոսացած սիրտ և մի հերոսացած ազգ», - այս խոսքերով Անկախության 25-ամյակին նվիրված հանդիսությունը բացեց Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը:

Հանդիսությունը կազմակերպել էին Հայ մոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը և Բանասիրական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը:

Միջոցառմանը թարմ շունչ հաղորդեց նաև Բանասիրական ֆակուլտետի նորաստեղծ «Գողթան» երգչախումբը, իսկ բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողուհի Գոհար Եղիազարյանը կատարեց «Մարտիկի երգը» և «Վեր կաց, եղբայր իմ» երգերը՝ ողողված կիթառի քաղցրահնչյուն երանգներով:

ՈՒԺ և հպարտություն էր հաղորդում հանդիսության պատվավոր հյուրերը՝ ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Հովիկ Մուրադյանը, ով, լինելով ընտանիքի միակ որդին, քառօրյա պատերազմի օրերին Լեռնային Ղարաբաղում անձնվիրաբար կռվում էր իր հայրենիքի սահմանների պաշտպանության համար: Հրամանատարությունն էլ ըստ արժանվույն է գնահատել մեր բոլոր զինվորների, այդ թվում և Հովիկ Մուրադյանի սխրանքը. նա պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» մեդալով: Մենք հպարտ ենք, որ Հովիկը մեր հյուրն է, մեր համալսարանի ուսանողն ու մեր ժամանակակիցը:

Ներկաներից յուրաքանչյուրը վստահ էր՝ դեռ շատ գարուններ են գալու, որ պահպանեն դառնան մեր Անկախությանը:

ԱՍԻ ԴԱԼԱՉՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.

Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:

Էլ. փոստ՝ asryansilva@gmail.com

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:

Հասցեն՝ Արշակունյաց 2

Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:

Թերթը չի վաճառվում:

Հանձնված է տպագրության 05.12. 2016 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am